թող գայ վանքի ոչխարները կթէ, այս գործից քեզ համար շատ շահմունք կը լինի. եղից, պանրից, բուրդից իր համար «քալաֆուր» կանէ: Քեզ էլ սուրբ սքանչելագործի մասունքը կը տամ, կերթաս Թաբրիզու կողմերը, կպտտես»: Ես ուրախացայ, այն ժամանակ մի քանի հարիւր ղուրուշ պարտք ունէի, մտածեցի, հա՛, աստոած ողորմաց, պարտքերս կը տամ: Մէկ էլ միտք արի՝ լաւ՛, իմ եղբօր կնիկը մէկ ամսոայ ջահել հարս է, հալա իր մեռելի սեւի մէջն է, ես ինչպէ՞ս թողնեմ, որ նա գնայ վանքի ոչխարները կթէ: Կասես թէ, սատանան ինձ խելքից հանեց, ասեցի՝ ի՞նչ կայ, մեր մղդսիների շատերի կնիկներն, հարսները վանքին ծառայութիւն կանէն, միաբանների համար հաց կը թխեն, նրանց շորերը կը լոան, կը կարկատեն, վանքի պանիրը կը մակարդեն, իւղ կը հանեն, բուրդը կը մանեն, ի՞նչ գլուխդ ցաւեցնեմ — վանքի համար տանտիկնութիւն կանէն: Ու այն կնիկների տղամարդիկն աւելի պատիւ ունեն հայր-սուրբերի մօտ. լաւ ուտում են, լաւ խմում են, լաւ հագնում են: Ինչո՞ւ մղդսի Թորոսը նրանցից պակաս մնայ: Ես Կարապետ հայր-սուրբի հրամանը կատարեցի. իմ եղբօր կնիկը գնաց վանքի ոչխարները կթելու, ես էլ առայ սուրբ սքանչելագործի մասունքը, գնացի դէպի Թաբրիզու երկիրը: Իմ ժողովարարութիւնը քաշեց աւելի քան կէս տարի: Երբ դարձայ տուն, տեսնեմ հարսը չկայ: — Ու՞ր է մեր հարսը, հարցնում եմ իմ կնկանից: Նա պատմեց, թէ՝ «հարսն ամէն օր կը գանգատուէր, չէր ուզի վանքը գնալ, հայր սուրբը մարդ կ'ուղարկէր, կը տանէր: Հայր սուրբը կասէր՝ «քեզ մղդսի Թորոսն է տոել, որ վանքի ոչխարները կթես, դու քո խզմաթ պէտք է կատարես, մինչեւ նրա գալը»: Մէկ օր տեսանք՝ հարսը չկայ, արեւը մտաւ, գիշերն անցաւ, նա տուն չեկաւ: Առաւօտեան գնացինք սարը պտռեցինք, ձորը պտռեցինք, չկայ ու չկայ: Որտե՞ղ կորաւ, աստոա՛ծ: Գնացինք ծովի ափը. այնտեղ տեսանք հարսի մարմինը ծովի ղալղաները գցել էին դուրս. նա խեղդոած էր... Մօրէն ոչ այնքան հեռու ընկած էր մի նորածին տղայ, որին դաշտի գազանները պատռէր էին»...

Մղդսին ձեռքը տարաւ դէպի երեսը, ինձ երեւաց, որ նա սրբրեց աչքերի արտասուքը, եւ ապա ձեռքը մեկնեց դէպի բլուրի ստորոտը, ասելով.

— Այստեղ են սալմաստեցի ուխտաւորները:

Ես բաժանոեցայ, ինձ հետ տանելով նրա պատմութեան տխուր տպաւորութիւնը...